

Հաստատում եմ՝

Ավանդական բժշկության
համալսարանի
նեկտոր, Գև Նախազահ



Ն. Խ. Սարիբեկյան

20/3 թ.

ԿԱՌՈՂԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՄԱՐԱՆԻ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն կանոնակարգը սահմանում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի իրավունքները և պարտականությունները:
- 1.2 Դասախոսի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է ոեկտորը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ներկայացմամբ:
- 1.3 Դասախոսը ենթարկվում է անմիջապես ամբիոնի վարիչին և դեկանին՝ յուրաքանչյուրի իրավասությունների շրջանակներում:

2. Դասախոսը պետք է իմանա.

- 2.1 Կրթության ոլորտին վերաբերող ՀՀ նորմատիվ իրավական ակտերը,
- 2.2 Համալսարանի ներքին կարգապահական կանոնները և ներքին այլ իրավական ակտեր,
- 2.3 Կրթական պետական չափորոշիչները,
- 2.4 Դասավանդվող առարկայի բովանդակությունը և ուսուցման կազմակերպման սկզբունքները,
- 2.5 Մասնագիտական աշխատանքում կիրառվող հիմնական տեխնոլոգիական գործնթացները և հնարքները,
- 2.6 Մասնագիտական ուսուցման մեթոդները և միջոցները,
- 2.7 Ուսանողների կրթության և դաստիարակության ժամանակակից ձևերն ու մեթոդները,
- 2.8 Աշխատանքի պաշտպանության անվտանգության տեխնիկայի և հակարդեհային պաշտպանության կանոններն ու նորմները:

3. Պարտականությունները

Դասախոսը պարտավոր է՝

- 3.1 Ուսուցումը իրականացնել կրթական պետական չափորոշիչներին համապատասխան,

- 3.2 ապահովել կրթական գործընթացի բարձր արդյունավետությունը, զարգացնել ուսանողների ինքնուրույնությունը, ստեղծագործական և նախաձեռնողական կարողությունները,
- 3.3 կիրառել դասավանդման առավել արդյունավետ մեթոդները, միջոցներն ու ձևերը, վերլուծական աշխատանքի հմտությունների ձևավորմանը նպաստող մանկավարժական արդի տեխնոլոգիաներ, նպաստել ուսանողների կողմից անհրաժեշտ տեսական և կիրառական գիտելիքների ավելի լավ յուրացմանը,
- 3.4 նպաստել ուսանողների մասնագիտական ունակությունների ձևավորմանը, նախապատրաստել նրանց ձևոր քերած գիտելիքների գործնական կիրառմանը,
- 3.5 մասնակցել կրթական ծրագրերի մշակմանը, կիրառել դրանք՝ ուսումնական պլանին և ժամանակացույցին հաճապատասխան,
- 3.6 վարել դասախոսություններ,
- 3.7 անցկացնել գործնական պարապմունքներ, սեմինարներ, ամփոփիչ հարցազրույցներ, ստուգազրույցներ, գործնական խաղեր, թեստավորումներ,
- 3.8 ընդունել ռեֆերատները, ստուգողական գրավոր աշխատանքները,
- 3.9 ընդունել ստուգաքններ և քննություններ,
- 3.10 պլանավորել և դեկավարել ուսանողների գիտական և ինքնուրույն աշխատանքները,
- 3.11 ուսանողների հետ անցկացնել կոնսուլտացիաներ,
- 3.12 մասնակցել դեկանատի և ամբիոնի նիստերին և ուսումնամեթոդական գործունեության այլ միջոցառումներին,
- 3.13 մասնակցել ուսումնական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական և ուսումնական այլ նյութերի նախապատրաստմանը,
- 3.14 ապահովել ուսումնական կարգապահությունը, հսկել դասերին, ուսանողների հաճախելիությանը,
- 3.15 պահպանել բուհի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները և աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտականությունները,
- 3.16 հոգածությամբ վերաբերել բուհի հոգեոր և նյութական արժեքներին,
- 3.17 կատարելագործել մասնագիտական որակավորումը, մանկավարժական վարպետությունը և գործնական փորձը,
- 3.18 հարգել ուսանողների իրավունքներն և ազատությունները, նրանց արժանապատվությունը
- 3.19 կատարել ռեկտորի, ամբիոնի վարիչի և դեկանի հանձնարարությունները:

4. Իրավունքները

Դասախոսն իրավունք ունի՝

- 4.1 մասնակցել բուհին վերաբերվող հարցերի քննարկմանը և լուծմանը
- 4.2 օգտվել գրադարանի, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից,

- 4.3 ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար,
- 4.4 օրենքով սահմանված կարգով բողոքարկել դեկավարության իրամանները և կարգադրությունները:

5. Պատասխանատվությունը

Դասախոսը ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում՝

- 5.1 սույն կանոնակարգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,
- 5.2 իր գործունեության ընթացքում կատարած իրավախսումների համար,
- 5.3 նյութական վճառ պատճառելու համար,
- 5.4 բուհի դեկավարության հանձնարարություններն ուշացումով և անորակ կատարելու համար: